ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար կենցաղային, տնտեսական ապրանքների և տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հունվարի 30-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51-12» պայմանագրում 2024 թվականի մարտի 15-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 30.01.2024թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51-12» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» «03» 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Յունիֆեք ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Աբրահամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 30.01.2024թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51-12» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝

1.1. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| *Դատական դեպարտամենտ* | *Յունիֆեք ՍՊԸ* |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արցախի 46/2 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 01566434 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 2051022010631001 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան | Տնօրեն՝ Կ. Աբրահամյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

**Հավելված N 1**
**« 15 » « 03 » 2024թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 3*
*« 30 » « 01 » 2024թ. կնքված*
*N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/51-12» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| | | | Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | |
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 15 | 33141170/2 | Հավաքիչ տոպրակներ | 174 582 | 174 582 | 174 582 | 271 572 | 271 572 | 271 572 | 387 960 | 387 960 | 387 960 | **387 960** |
| 17 | 39221410/1 | Ավելներ | 407 700 | 407 700 | 407 700 | 634 200 | 634 200 | 634 200 | 906 000 | 906 000 | 906 000 | **906 000** |
| 19 | 39522340/1 | Փայլեցնող կտորներ | 105 084 | 105 084 | 105 084 | 163 464 | 163 464 | 163 464 | 233 520 | 233 520 | 233 520 | **233 520** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***Յունիփեք ՍՊԸ***
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արցախի 46/2
ՀՎՀՀ՝ 01566434
Հ/Հ՝ 2051022010631001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Կ. Արքահամյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ